

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» փետրվարի 2015թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31**-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N **551** որոշմամբ հաստատված կարգի **2**- րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն գրող, հրապարակախոս, թարգմանիչ Սամվել Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Գայի պողոտա հ. **27** հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇՍԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրող, բանաստեղծ, թարգմանիչ Սամվել Մկրտչյանը ծնվել է **1959թ.** Թալինում: Ավարտել է Լենինականի /այժմ՝ Գյումրի/ թիվ **20** միջնակարգ դպրոցը, այնուհետև, **1983թ.**, Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը: Աշխատել է «Աստղիկ» հանդեսում, ապա եղել է ետխորհրդային մամուլի առաջին՝ «Անդրադարձ», «Ար», «Բանբեր» թերթերի գլխավոր խմբագիրը՝ իր ներդրումն ունենալով անկախության հաստատման շրջանի մամուլի կայացման գործում: Սամվել Մկրտչյանի ձեռագրի և սկզբունքների շնորհիվ հիշյալ պարբերականները կմնան հայկական մամուլի պատմության մեջ իրապես չորրորդ իշխանության՝ հրապարակախոսության, ազատախոհության, գրական ճաշակի չափանիշներ սահմանող նմուշներ:

Սամվել Մկրտչյանն աշխատել է «Առավոտ» օրաթերթում և Հայաստանի ԳՄ պաշտոնաթերթ «Գրական թերթ»-ում:

Հայաստանում և արտերկրում հրապարակվել են Սամվել Մկրտչյանի հեղինակած հարյուրավոր հրապարակախոսական հոդվածներ, բանաստեղծություններ, պատմվածքներ:

1995թ. Սամվել Մկրտչյանը Հայաստանի գրողների միության անդամ էր:

2002թ. հիմնել և մինչև **2014թ.** խմբագրել է «Արտասահմանյան գրականություն» թարգմանական եռամսյա հանդեսը:

Պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալով, եղել է «Կանթեղ» մրցանակի դափնեկիր:

Իռլանդիայի մայրաքաղաք Դուբլինում՝ Ջեյմս Ջոյսի թանգարանում, Սամվել Մկրտչյանի «Ուլիսեսի» հայերեն թարգմանությունն իր պատվավոր տեղն ունի այդ գրքի եզակի թարգմանությունների շարքում: «Ուլիսեսի» թարգմանությունը գրական սխրանք էր, որով հայ ժողովուրդը վերահաստատեց մշակութաստեղծ ժողովուրդների շարքում լինելու իր իրավունքը:

Սամվել Մկրտչյանը հայտնի է Շեքսպիրի, Վիլյամ Սարոյանի, Լուիս Քերոլի, Ռեդյարդ Բիվլինգի, Վիլյամ Ֆոլքների, Հերման Մելվիլի և այլ գրողների ստեղծագործությունների թարգմանություններով: Կատարել է նաև հայերենից անգլերեն թարգմանություններ:

Սամվել Մկրտչյանը մահացել է **2014թ.** դեկտեմբերի 7-ին Երևանում:

Սամվել Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Գայի պողոտա հ. **27** հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել ՀՀ ԱԾ պատգամավոր Ն. Զոհրաբյանի, ՀՀ մշակույթի նախարար Հ. Պողոսյանի և Հայաստանի գրողների միության նախագահ Էդ. Միլիտոնյանի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԱՍՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սամվել Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԱՍՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սամվել Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ